*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 Լրացուցիչ աշխատանքների ձեռքբերման անհրաժեշտություն

Փոփոխության նկարագրություն Լրացուցիչ աշխատանքների ավելացում պայմանագրի 10 տոկոսի շրջանակում, Համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 7,5 կետ, Գնումների մասին ՀՀ օրենսդրություն

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
# ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019թ. դեկտեմբերի 20-ին կնքված N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-20/1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան «24» փետրվար 2020թ.

«Կապանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Լևոն Լևոնյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ելնելով անհրաժեշտությունից և հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, համաձայն Գնումների մասին ՀՀ օրենսդրության և պայմանագրի 7.5 կետի, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Սույն համաձայնագրի առարկա է հանդիսանում՝

1.1Լրացուցիչ ծավալի աշխատանքների կատարում՝ Հ. Ավետիսյան 1, Թումանյան 1, Շահումյան 18, Հալիձոր 14 շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում,

1.2 Պայմանագրի գնի ավելացում 528000/հինգ հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամով,

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում՝ մինչև 2020թ. մարտի 10-ը:

2.Պայմանագրի 4.1 կետի <<4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 5280000(հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ>> նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 5808000(հինգ միլիոն ութ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ>> նախադասությամբ:

3.Պայմագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը և Վճարման ժամանակացույցը փոփոխվում են սույն համաձայնագրով կատարվող փոփոխություններին համապատասխան:

4.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները, ստորագրությունները.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Կապանի համայնքապետարան | <<Սարգիս և Մարիաննա>> ՍՊԸ |
| Ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա | ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, ՆարԴոսի 28ա |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Նաիրի մ/ճ |
| ՀՀ 900312000194 | ՀՀ 163228137481 |
| ՀՎՀՀ 09426088 | ՀՎՀՀ 03308717 |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |